Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 11 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի Խաչատուր Աբովյանի անվան հիմնական դպրոցի համակարգչային դասասենյակի կահավորում» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի մշակույթի տան մասնակի կահավորում» ծրագրերը.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 09.12.2011 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2012 թվականի» ծրագիրը.

«Հայ-ավստրիական բարեգործական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ին բուժսարքավորումների տրամադրում» ծրագիրը.

«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հակակարկտայի ZENIT կայանքի տեղադրում Բաղրամյանի տարածաշրջանի Արգինա համայնքի օրգանական այգիների համար» ծրագիրը.

«Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն անապահով ընտանիքներին», «Սուրբ Աստվածածին» ամառային ճամբարի կազմակերպում» ծրագրերը և «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է Տաշիր քաղաքի մոտ 30 միակողմանի և երկկողմանի որբ երեխաների ու պատանիների (6-18 տարեկան) խնամք.

NATO-ն հանուն խաղաղության և անվտանգության ծրագրի շրջանակներում անցկացվող «Տեխնոլոգիական նվաճումները քիմիական, կենսաբանակա, ռադիոլոգիական, միջուկային և պայթուցիկ նյութերի բարձր արդյունավետությամբ հայտնաբերման վնասազերծման ասպարեզներում» գիտաժողովի անցկացում» ծրագիրը.

«Հայ կրթություն» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագիրը.

«Արտաշատ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սուրբ Հովհաննես եկեղեցու կառուցման և բարեկարգման երրորդ փուլ» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: